ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 351-Ա
« 01 » ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024Թ.
ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2335 որոշման 3-րդ և 7-րդ կետերով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Մալիշկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գայանե Հարությունյանին 2024 թվականի նոյեմբերի 1-ին գործուղել ք. Երևան, մասնակցելու 2024 թվականի նոյեմբերի 1-ին և 2-ին կայանալիք «Ընտանեկան բժշկություն» թեմայով 11-րդ միջազգային գիտաժողովին:

2. Գայանե Հարությունյանի գործուղման հետ կապված ծախսերը (օրապահիկ, գիշերավարձ և ճանապարհածախս) կատարել համապատասխանաբար Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Մալիշկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի ֆինանսական միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով և կարգով:

3. Գայանե Հարությունյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել հաշվետվություն՝ գործուղման հետ կապված ծախսերի և գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Ք.Եղեգնաձոր